19062

Upti mC

qtémtép

891.99
f-17

1920

ԱՐԵԱՆ ԳԵՏԵՐ

Աշխատասիրեց եւ հրատարակեց

ՎԱՐԴԱՆ ՔԱՄԱԼԵԱՆ

Մեր հողն ու ջուրը, մեր սարն ու ձորը,
Դարձեալ հարազատ հայրենի տունը,
Դորի՛ց ե՛ս առաքի արիւն վօրիով
Երեք միլիօն Հայ՝, նահատակ ցաւով...

ՀԵՂԻՆԱԿ

891.99
Ք-17

1920

202

2003

LIBRAIRIE ORIENTALE
H. SAMUELIAN
51, RUE MONSIEUR-LE-PRINCE
PARIS VIe — DAN. 88-65

891.99
Ֆ-17

100 P

423

ԱՐԵԱՆ ԳԵՏԵՐ

Աշխատասիրեց եւ հրատարակեց

ՎԱՐԴԱՆ ՔԱՄԱԼԵԱՆ

Մեր հոգն ու ջուրը, մեր սարն ու ձորը,
Դարձեալ հարազատ հայրենի տունը,
Նորի՛ց է՛ս առանց արիւն վօրելով
Երեք միլիոն Հայք, ճահճատակ ծալով....

ՀԵՂԻՆԱԿ

1920

P. BALENTZ
LIBRAIRE
233, Faubourg St-Honoré, PARIS

29390-4.2

12298-58

ՎԱՐԴԱՆ ՔԱՄԱԼԵԱՆ

Ես չպիտի լռեմ, երբէ՛ք իմ կեանքում,
Քանի կենդանի եմ, սիրտս է բաբախում,
Քնարիս նրբին լարերն հնչում
Պիտ՝ զարնեմ երգեմ, ազգիս փրկութիւն:

ԵՐԿՈՒԵՑՈՒՆ այն . . . հովիտներ,
Հայի բոսոր արիւնով,
Մեր պանծալի սուրբ երկիրը
Վամպիրմ դարձրին կարմիր ծով. . . :

Ո՛չ թողուցին մեզ նուիրուած
Գէթ յիշատակ հայրերու . . .
«Ցաճարը, դպրոց» վերածեցին
Ա.ւերակներ բուերու . . . :

1916 ՀԵՂԻՆԱԿ

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
Ք. Մեծամոր 1 Мясникян
Ք. ՄԵԾԱՄՈՐ ԱՆՎԱՆ

ԳԱՐՈՒՆ ԵՐԳԵՐ

ՆԱՐԻԴ լուռ լարիկներին,
Դու մի դպչիր ո՛վ պօէտ,
Զեռք մի՛ զարներ թո՛ղ դադարէ
Վիշտ երգելուց յար յաւէտ։

Այդ քնարդ շատ է երգեր
Հայի անհուն վէրքերը,
Ալ հե՛ռիք է ծովածաւալ
Քրքրես մե՛ր դարտերը . . .։

Վե՛րջ տո՛ւր պօէտ քո՛ աղեխարշ
Դարտերով լի հեկանքին,
Խօցոտ սրտիդ խոր էջերից
Սիրտ մղկտող հառաչին։

Ե՛կ նուիրէ քո քնարը,
Ազգիդ նորեկ սերունդին,
Բայց այսհետեւ այլ չի երգես
Ցաւ ու մորմոք վերստին։

Կ՚ուզե՛ս երգել՝ երգիր Հայուն
Նորօք կեանքի . . . արշալոյս
Հայաստանի նոր ծիլ, նոր տունկ . . .
Մանուկ մատաղ նորեկ բոյս։

Որք պիտ՚ կազմեն հիմքը ազգին,
Վերանորոգ գոյութեան,
Որը կրկին պիտ բազմանան
Մէջն ի տան սեղ Հայկեան։

Եւ դրախտի պիտ՚ վերածեն
Աւեր եդեմ պատմական,
Պիտի անեն նորից այն տեղ
Հոյլ վարդերի բուրաստան։

Այդ վշտաբեկ լարիկներով
Շատ ու շատեր երգեր են,
Զիդ դարերով հայի՛ անթիւ
Մրմունջները . . . հիւսեր են։

Օ՜հ, հերիք է այլ դո՛ւ չանթէս
Վէրը նորոգող քնարով,
Զրգէ անդորը հայի որդիք
Դէթ մի բոպէ անխռով։

Քո քնարի թելիկները,
Ալ, չի՛ տխուր մեղեդին
Թո՛ղ անծանօթ լինենք այդ քո՛
Սիրտ ծակծկող խօսքերէն։

Թէ դո՛ւ կ'ուզես երգել պօէտ
Երգեր Հայուն նոր գարուն...
Իսկ եթէ ոչ պէտք չէ այլ կերպ
Քեզի բռնէ միշտ լռուն։

ՎԵՐՍՏԻՆ

Նորից փայլեցաւ հոգի Հայաստան.
Նորից կեանք... առաւ ոտքի կանգնեցաւ,
Ցրուեցէ՛ք ամպեր, Հայկայ աշխարհէն,
Հայն էլ սև քողը, դէն շպրտեց գլխէն...։

Օտար երկրրի, որդիքն Հայկեան,
Թափուր հայրենեաց գիրկն լեցուեցան,
Նորի՛ց վերշինուեց տունն Թորգոմեան,
Նորի՛ց եռում է՝ կեանքը Հայութեան...

Նորի՛ց եղեմում, մեր տենչած գարուն...
Նորի՛ց նոր արփի... ցայթեց իւր վրան,
Նորի՛ց ամէն կողմ, երգ ու ցնծութիւն
Նորի՛ց «սէր համբոյր եղբարց միութիւն»։

«Զուլումի երկրի» աւեր տեսարան . . .
Նորից վերածուեց դրախտ և բուրաստան,
Նորի՛ց բացուեցան, վարդ, մեխակ, շուշան,
Նորի՛ց պճնուաւ «Թագուհու նման»։

Նորի՛ց հայրենի աշխարհն սրբազան
Եղաւ հայ զարմին աղատ սրբարան, որրան,
Նորից ստացաւ «Թագը կենարար»,
Փա՞ռքը երգում են կեանքեր անհամար։

«Զքացան ձմրան այն . . . բուքն ու բորան»։
Նորի՛ց գարնային . . . դերունք բացուեցան,
Նորի՛ց «վարդենի» չորցած թփիկներ . . .
Կանաչան, ծաղկան . . . զարդարուն ոստեր։

Հուսկ հայի եթերից ամպերք ցրուեցան . . .
Փա՞ռք Նորի՛ց փայլեց աստղը իմ ազգին,
Կե՛ցցէ ցեղն Հայկեան, կե՛ցցէ Արմենեան,
Ա՛լ չեն իր համար սուգ ու սև շիւան.
Փշրերեց ընդ միշտ դարաւոր չղթայն . . .։

ԵՒ

Նորի՛ց և նորի՛ց բացականչում եմ. կե՛ցցէ հա՛յ ազգը, կե՛ցցէ մեր սրբազան պաշտելի հայրենիքը, որ այնպիսի պատիւ ու պարծանք բերող հերոսներ է ծներ ու սնուցեր իւր կրծքին վրայ, այնպիսի հե՛րոսներ, որոնք ազգի՛ և հայրենիքի գոյութիւնը աւելի վսեմ, աւելի գերազանց, համարեցին, քան իրանց ամենաթանկագին ծաղիկ կեանքերը, որ դեռ նոր հազիւ հազ ոտք էին դրած աշխարհի վրայ շատ մը յոյզերով . . . ապրելու յոյսով, ապրելու տենչով . . . բայց և այնպէս տեսան որ ազգը տառապանքի ծովի մէջ ինկած, փրփրագոռ կարմիր ալիքների մէջէն, փրկութիւն էր գոչում, փրկութիւն էր աղերսում, մտքի բոյն նշանակութեամբ այնպիսի մի

դժոխային ահռելի կացութեան մը մատնուած էր որ, ոչ մի ազգութիւն, սրա նմանը տեսած չէ... Նոյն իսկ Աստուածները անգամ այսպիսի կատարուած նախճիրների մը... հանդիսատեսը եղած չեն, այնպիսի նախճիրներ՝ որին գրիչս աւա՜ղ անզօր է նկարագրելու, իւր սարսռեցուցիչ իսկութեամբը... մի խօսք այս ամէնը Հայի կեանքին վրայ էր չափում, ու Հայի կեանքին վրայ էլ գործադրում... վերջապէս պէտք էր ելք մը գտնել, ազգը ընդմիշտ վերջնականապէս այս կորուստից ազատելու, ահա՛ ժամանակը հասեր է, դարերով մեր ճակտերին քսուած սև մուրը... խպառ սրբելու, եթէ ո՛չ իսկապէս որ մեծ դաւաճանութիւն կը լինի մեր կողմից, հանդէպ ազգի, հանդէպ հայրենիքի, և հանդէպ յետնորդների ասելով, բոլորը վառվռուն սրտով, վառվռուն ոգով, նետուեցան համաշխարհային կարմիր կրկեսի... մէջ, և Նոխա իրանց վրայ առած Մեսիան... յաջողութեամբ աւարտելով, ինկան վերածնուած հայրենիքի փրկութեան սուրբ սեղանի առաջ... փա՜ռք Նոցա, որոնք արժանի են ամենաբարձր և ամենավսեմ գովասանքնե-

րու... անշուշտ Եղիշէ մը պէտք էր որ Նոցա հիասանծ վճռական ճակատամարտների սխրագործութիւնները նկարագրէր, իւր իրական տիպով... որը թողնում եմ յետագայի կարող Եղիշէների գրչին։ Արդ, մա՛յրիկ, վեր ել, բաց որդւոցդ վօթած արիւնով գնուած պաշտելի ազատութեանդ դռները, և անփոփիր Նոցա քո՛յ սրտի մէջ, թո՛ղ հանգչին նրանց սուրբ նշխարները քո՛ մայրական գրկում, և այսուհետեւ օրօրիր զանոնք ազատութեան երգերով, որ քո՛յ մայրականութեանդ ծոցին մէջ անուշ ու քաղցրիկ քուն ըլլան... այն անձնանուէր տիտաններըը, որ արդէն իրանց սրբազան պարտականութիւնները լիուլի լիովին կատարեր են առ քեզ...։

ՄԱՅՐԻԿ

Ո՜ Նոցա գիրկդ, տեղ տուր հանգստեան,
Պահի՛ր դո՛ւ պահի՛ր, ի մէջ քո՛ ծոցում,
Ամեն մի Նոցա հիւլէի մասունք...
Որ քեզի համար թափեցին արիւնք։

Արդարև Նոքա ճշմարիտը արժանաւորների արժանաւորները լինելով, խոնարհում եմ պատկառանքով Նոցա թարմ շիրիմների առաջ, և ծնկաչոք թաց աչերով համբուրում եմ լուսաշընչուղ պաշտելի սուրբ գերեզմանները, այն գերեզմանները... որոնց մէջ մէկ մէկ Վարդաններ են հանգչում, հանգիստ ձեր պատուական բազմաչխատ ոսկերքներին, հարազատ հայրենի սուրբ գրկին մէջ, ո՛վ Հայրենիքի Փրկիչներ...։

ՊԱՇՏԵԼԻ ԵՂԲԱՅՐԻՆ

Իրաւունքներ է ձե՛ր սուրբ իղձերը...
Դո՛ւք առէք հանգիստ հայրենի գրկում,
Քաշեցէք անուշ քաղցրիկ քնիկ,
Ձեր վսեմած արնով «փրկւեր է մայրիկ»։

ՊԱՇՏԵԼԻ ՀԱՅՐԵՆԻՔ

Ով կենաչորհ Հայոցս աշխարհ,
Անդրէն վառ փարոս եղար մեր համար,
Ամայի, աւեր, մեր սրտիկների
Փա՛ռք այգդ ծագեց... մթին էջերին։

Որ քանի՛ դարեր, ջարդ ու կոտորում...
Կրե՛ցինք մա՛յրիկ քեզի տարուելով,
Բոլորս եղանք կենացդ մատաղ,
Շատ քիչ մնացինք, նմուշ հազիւ հաղ։

Բիւրաւոր կեանքեր թաղեցին... կենդան
Սար ու ձոր, հովիտ, ըրին գերեզման...
Քամեցին... վերջին մեր կաթիլ արիւն,
Հալա՛նք ու հատանք քո՛յ անհուն սիրուն։

Բռնութեան գառներ՝ բռնութեան զոհեր,
Մեր օր արեւիկ... հա՛, միշտ խաւարներ,
Որը աննկուն տարեցինք վեց դար,
Ո՛չ մի՛ գթացող մեր վրայ չ՚կար...։

Ո՛վ հոգի՛ աՀիր Հայրենիք անգին,
Վերստին արար քո՛ փառքը նախկին...
Որպէս թագուհի՛ հագար ծիրանի,
Եւ կրկին եղար կենսատու Հային։

Անչափ, անկշիռ... արի՛ւն վօթեցինք,
Մինչև որ մայրիկ քեզ գարուն բերինք...
Փա՛ռք ահա՛ արդէն ցնծութեանդ օրն է,
Ժանգ կապանքներից... ազատմանդ տօնն է։

122998-58

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР
Ա. Մեսրոպի անվան

ՀԱՅԵՐ

Ա՛ՅԴ կենսաբաշխ հայրենիքի
Սիրոյն տարուինք սրտագին,
Նորա մէջն է մեր փա՛ռք ու կեանք,
Կուրծքին փարուինք ամրագին։

Հա՛յք մենք նորից մի՛ արասցէ
Որ մեզ մատնենք գերութեան,
Մեր դահիճներ կրկին իշխեն
Մեր պապերի օթեւան։

Հե՛ռու մեզնից մե՛ծ դաւաճան
Մե՛ր ճակտերին կնքել տանք,
Մե՛ր վիզերին ստրկութեան
Սուր գերնդին դնել տանք։

Թէ որ մեր մէջ սէր միութիւն
Հայե՛ր, Հայե՛ր չունենանք
Մե՛ր առած փա՛ռք ձեռից կ'ելնէ
Առանց փա՛ռքի կը մնանք։

Նորի՛ց մեզի արիւն արցունք,
Ճոխ-ճոխ բաժին կը հանեն,
Մեր պապերի սև քողերը . . .
Մեր գլխերին կը փաթթեն։

Ա՛լ չի՛ գզեն, չի՛ բզքտեն . . .
Հայե՛ր, Հայե՛ր միմեանց,
Հոյլ դարերով մե՛ր պապերի
Քաշածները . . . ընենք զանց . . . ։

Նորի՛ց չ'տանք մեր պարանոց
Հայե՛ր, Հայե՛ր չղթայի . . .
Կրկին չ'ելլանք կամքին հլու . . .
Խոնարհ գրաստ աղայի . . . ։ (օտարի)

Այլ մի՛ հոգով ու մի՛ սրտով
Պիտի լինինք մշտական,
Միայն սա է գրաւական
Մեր հայրենեաց ազգութեան։

ՀԱՅԵՐ

ՀԱՅԵՐ ունեցէք սեր, սեր կրկին սեր. չունէք սեր, ուրեմն չունէք ո՛չ մի բարիքի սպասելու իրաւունք, այն ազգը որ չունի սէր՝ չունի միութիւն, չունի հայրենիք, չունի կեանք, չունի գոյութիւն, այնպիսի ազգութեան մը չապրելը հազար անգամ ապրելուց լաւ է, քան սրան նրան ձեռին տակ խաղալիք մը դառնալով մնայ ծաղրի առարկայ, ողորմելի միմոս մը... աշխարհի վրայ ամենազգու ամենազօրաւոր զէնքը սէրն է, այդ կից ամուրը, այդ կից հզօրագոյնը չկայ բացի առաւծմէ, Մովսէս զուր չէ ընտրած սէրը իրեն հաւու զէնք, այդ սէրն էր որ նրան հասցրեց ի հարկի տեղին... և ատով էր որ նա ամենաանընկճելի խոչընդոտները յաղթահարելով, հասաւ իրա-

պէս իւր փա՞ռաց փառքին... սէրն է որ անիրականալին իրականութեան է վերածում, ազգ մը հայրենիքով կը ճանչցուի, այն ազգը որ չունի ինքնուրոյն հայրենիք պաշտօնապէս կորսուած է... նոյն իսկ ազգերի կողմէ անգամ չի՛ ճանչցուիր այն ազգը որը չունի հայրենիք, թէկուզ ճանաչի ալ, հարեւանցիօրէն կարեւորութիւն մը չը տալով... իսկ հայրենիք ունենալը և նրա տէ՛ր տնօրէն լինելը բարեբաղդաբար սէրից և միութիւնից կախում ունի, այն ազգը որ ինքնուրոյնութիւն մը չի կազմեր, յետ յետոյ կը հալուի ու կը ձուլուի... օտարազգիներու մէջ և այդպիսով իր գոյութեանը վերջ կուտայ որպէս փիւնիկ այս աշխարհը ազգերի մրցամարտի ասպարէզ մըն է... վայ այն ազգին որ տակն է մնացեր, և օտարի գարշապարի տակ տրորվելը իրան բաժին է, ինկած... այդպիսի վիճակի մը մէջ ապրելը աւելորդ է քան տեսնել իրան, ուրիշի կամրին ու կրքին տրամադրութեան տակ... գրաստի հաւասար արհամարհելի լոկ կենդանի էակ մը, այս դէպքում, օրը հազար անգամ մեռնելուց լաւ է մի անգամ, վերջ տալ օտարի հաշուէ օգտի ապրելիք կեանքին, սէրով եւ միութիւնով չի օժտուած ազգութիւն

մը նմանում է հին բերդի, որը փուլ գալով անհետանում է այդ վիթխարի շէնքը աշխարհի վրայէն, որուն քարերը սիրոյ միութիւն մը չի կազմելով, լինում է աւերակաց կոյտ մը, ազգերի հիմքը կազմում են այս երկու սրբազան բառերը, և սրանց վրայ էլ կառուցեր են իրենց ազգային գոյութեան շէնքը... ե՛ղուկ այն ցեղին որ զուրկ է սոյն շնորհքներէն. սիրոյ մէջն է կայանում մե՛ր բոլոր ցանկալի իղձերը... թէ կ՚ուզենք իբրև ազգ մարդկօրէն ապրիլ... դորա համար մե՛ք մե՛ծ պատգամը ասած է, մէկը հաղարի համար է իսկ հաղարը մէկի, ճշմարտին ճշմարիտն է որ, սէրով լեցուած ազգութիւն մը, հրաշքներ է գործում... իսկ անսէրազուրկ ազգ մը ապրելու և աստուածային պարգեւած կենացը բարիքները վայելելու փոխարէն, դերեզմանների շարաններ է աւելացնում թշնամիի սուրի բերանով... անիմաստ ազգութեան մը գոյութիւնը, զրօի հաւասար է, քանի որ ինքը ուրիշինն է... և ո՛չ իրան... վեհանձն, ինքնաճանաչ ազնիւ ցեղ մը, ո՛չ մի անգամ, թոյլ չի տար որ, իր վրայ գերիշխող լինի ուրիշը, որովհետև այդ նրան մահ է և նա միշտ էլ դորա համար պատրաստ է սէրով

ու սրտով նետուել արեան դաշտ, պահել հայրենիքը, և փրկել պատիւը... և այդպիսով կատարում է այն մե՛ծ սրբազան անգնահատելի պարտականութիւնը..., թէկուզ ինչ գնով ալ լինի միայն թէ չի՛ չխէ իրան օտարը... կեցցէ այդպիսի գիտակից դիւցազն ազգը, որը ի պատիւ և ի պարծանս սիրոյ արժանի է ապրելու... սէրն է ամէն ինչի..., վէմ քարը, առանց նրան ո՛չ մի բան չի՛ շինվիր, թէկուզ շինուի էլ, հիմք չի բռներ և շուտով կը կործանի... վերջապէս բառիս բուն լայն իմաստով ինչպէս որ կերակուրի մը անհրաժեշտ է աղը, այնպէս ալ ազգութեան մը անհրաժեշտ է սէրը՝ կրկնում եմ անգամ մը լայն բացէք աչերնիդ և տեսէք թէ որպիսի հրաշքներ են գործում սէր ունեցող ազգերը տիեզերքի վրայ, վայ այն ազգին որ նախանձութիւնով, շարակամութիւնով ու չկամութիւնով է բեռնաւորուած դէպի իւր արիւնակից եղբայրը, աւա՜ղ որ այդ կրիլացաւին բռնուողներից մէկն ալ դըժբաղդաբար հէնց հայ ազգն է, Հայե՛ր դուք ձեր թշնամիները ձեր կուինճոտ սրտերի մէջ փնտռեցէք, եթէ ոչ չարաչար սխալուած կը լինէք ասելու թէ, մեր թշնամիները օտար ազգիներէն է,

կրկնում եմ որ, չարաչար կը մեղանչէք Հայե՛ր ուրիշները ձեզի ոխերիմ ճանաչելու մէջ, թէ այսինչներնեն մեր դժբաղդութեան պատճառ եղողները, այո՛, անկասկած խօսք չկայ որ օտարը իր ազգային գոյութիւնը պահպանելու պարտականութիւնն է կատարում... ի վնաս դիմացինին իսկ օգուտ իրան... դորա համար ալ նա հաղար ու մէկ գաղանութիւնների է դիմում... արդէն դա բնական յայտնի ճշմարտութիւն մըն է որ, օտարը միշտ էլ օտար է մեզ համար, Հայե՛ր, հապա դուք ինչու ձեր ձեռներով ձեզի փոսեր էք փորում... ինչպէս որ պատմութիւնը կը ցուցնէ թէ Հայը իրեն աւելի թշնամի եղած է քան օտարը, Տրդատի թագաւորութեան օրէն սկսեալ պատմութիւնը շարան շարան նախատինքի տարափ մըն է որ տեղում է Հայե՛րիս գլխին... ասում եմ այդ անողոք և անաչառախօսը, անգամ մը թերթեցէք և պիտ տեսնէք այն տեղ թէ որպիսի գոյներով... ցեխ ասէք որ չէ շպրտում հայութեան ճակտին որուն էջերը դաւերով ու մատնութիւններով է լեցուած... թողնենք դրան իր տեղը, և շատ մը չի խարնքտենք այդ ճահիճը, քանի որ նոյնն է նա և մեր օրում... սուտ չեն ասած

որ օտարը հային այն չէ անում ինչ որ ինքն իրան... անդրադառնալով՝ աս պիտ ասեմ որ միութիւն և եղբայրութիւն չունեցող ազգ մը թոքախտաւոր մարդու է նմանում, ինչպէս որ միլիոնաւոր միքրոպների շարանները, արձակում գործելով կրծըտում են խիղճի, այն ապրիլ ցանկացող սիրտը ու նրան հալ ու մաշ են անում, այնպէս ալ սէր չունեցող ազգութիւն մը իր անմիաբանութիւնովը, հալում ու հատնում է այնպէս, ինչպէս թոքախտաւորը, և այդպիսով վերջ կուտայ իր գոյութեան... մի խօսք՝ սէրն է ամէն բանի աստուածը, որ մարդիկ կարող են ամէն ինչ... դրբանով իրականացնել, օրինակ՝ ինչպէս որ լեռնալանջի կրծքին վրայ, բարդ բարդ դիզուած ձիւնը, կիզիչ արեւի տակ հալուելով անհետանում է, այնպէս էլ սէրի առջև չ'կայ մի անյաղթելի ուժ մը որ, ըմբոստութեան դրօշակ պարզէ, թէկուզ պարզէ, բայց և այնպէս շուտով վար առնելով իր ցեղի խոնարհ և հլու հպատակութիւնը կը յայտնէ, ահա՛ ձեզի փաստացի իրական օրինակ մը, որ դարերէ ի վեր Տարտանելի մարտկոցների բարձունքների վրայ հպարտ հպարտ ծածանող մահիկաւոր դրօշակները, որպիսի յոխորտանքով մը

թրթրում էին եթերի գրկում, այն հռչակաւոր
նեղուցի եղերներում... այդ ողորմելի կարմիր
աստարները դարերով քամիների ծփանքներին
տարուելով... յետ յետոյ, որպիսի խայտառակ
վերջաւորութիւնով մը դլխիկոր իջուեցան վար,
յիշեալ քուրջերի կտորները... և այսպէսով
վերջ տրուեց անհեռատես իւր ապագան չի մտա-
ծող խելքէ բոպիկ թուրք կոչուած ներկիլէճի ցե-
ղի մը ենիչէրիականը գոյութեան... որ միշտ
ինքը իրան անընկճելի էր ճանաչում մինչդեռ
ընդհակառակը տաք ջուր ինկած փխրուն կաւի
չափ ալ շնորհք չունեցաւ... լուսաւորութեան
դահիճ, յառաջդիմութեան դահիճ, ճշմարտու-
թեան և արդարութեան դահիճ, մարդկութեան
դահիճ, վերաշինման վերածաղկման դահիճ, ամէն
ինչ... աւերածութեան մատնող հուրի՛ ու մո-
խիրի վերածող մի խօսք՝ կատարեալ պատիժ մը
ու պատուհաս մըն էր, այս աչխարհաւեր լոկ
անուանական հաւաքածու թափառաշրջիկ միջազ-
գային աւելցուկ վաչկատուն վայրենի... կիսա-
ցեղը..., որուն մայրաքաղաքը հռչակաւոր պատ-
մական Բիւզանդիոնն է, այդ դաղանների որջ
կոչուած անիծեալ Մայրաքաղաքը, շարունակ ընդ-

միշտ, օրերով ու դարերով, դաղանապետներին
արիւն ու արցունքն էր մատակարարում... մա-
նաւանդ հայ ցեղի վարդագոյն արիւնը լափեց ու
լակեց իւր վերջին ծայր յղփացումով... շնորհիւ
նենդամիտ Ցուդայի դերը կատարողների... ահա
քեզի քսաներորդ դարի լուսաւորութիւն, արդե՛օք
կա՛յ մի մէջը նշուլի չափ արդարութիւն,... վեր-
ջապէս անմոռանալի և անբուժելի է մեր ստացած
վերքերը... անմարելի է մեր սրտերի հուրը ինչ
արած որ այս փուճ աչխարհում տուժողը միշտ
ճշմարտութեան ու արդարութեան հետեւողներն
են եղած, վերջապէս աւելորդ կը համարեմ շատ
մը այսպիսի օրինակներ կրկնելը, միայն այսքան
կասեմ որ, իրաւաղուրկ օտարի բռնութեան ճի-
բաններին տակ քաշնէքաշ ապրող ազգի մը ապա-
գան, միշտ էլ այս կերպով է պսակուեր... ո՞վ
է մեղաւոր դարձեալ Հայերս մեր անմիաբանու-
թիւնովը մենք մեզ, ձգեցինք այսպիսի մի...
սրտաճմլիկ ողիկտուր վիճակի մը մէջ... մի
խօսք՝ որ կողմն ալ դառնանք այսպէս թէ այն-
պէս մեզի սէր է հարկաւոր Հայե՛ր, սէր, առանց
սէրի չկայ Հայութիւն ասում եմ՝ թէ կ՚ուզէ՛ք
իրրև ազգ, գոյութիւն ունենալ, թէ տենչը ու-
նիք ապրելու արեւի տակ, ուրեմն ունեցէք սէր,

սէր, կրկին սէր. թէ չուզէք՝ սա սև աղեռներին, եւս կրկնութիւնները կարող եմ ասել որ ազգ մը առանց հացի կարող է ապրել, բայց առանց սէրի ոչ մի անգամ . . . սէրը զօրաւոր է, չկայ ոևէ արգելք մը նրա հանդէպ որ դիմադրող և մաքառող ոյժ մը հանդիսանայ. մեր հայրերի գործած սխալները, մենք միայն կարող ենք նրան սէրով ուղղել, անկեալ ազգ մը տառապանքը ու հալածանքը, որքան սաստկանայ այնքան մօտալուտ է նրա փրկութեան ժամը, մեր պապերի յանցանքները, մենք ենք քաւում իբրև ժառանգորդներ, որ սա բնութեան անիմանալի բնական օրէնքն է . . . վնատուիլը վայել է թշնամիին, և ոչ . . . հային, այո՛ թէ և Զաքարիայի դերին մէջ ենք գտնուում դե՛ռ, բայց և այնպէս այս անգամ, հազարից հազար վստահ եմ որ, թշնամին պիտ չի կարողանայ մարսել Հայերէս ծրծած այնքան անմեղ . . . արիւնը, չի նայաց որ նաբիգոդոնոսորեան ու ներոնեան . . . մորթոտումները արեան ծովերի մէջ ենք լողում բա՛յց և այնպէս, ես նորից և նորից կրկնում եմ որ, երբ ազգի մը կականը ու հեծկլտանքը . . . իւր ծայր գագաթնակէտին է հասեր, ուրե՛մն գիտցէք որ, դա արշալոյսի մօտ լինելու ազդանշան է . . . կ՚ապրինք և կը տեսնենք Աստուծով։

1916 թ. սեպտեմբեր 22ին Նալբա

ԹՈՂ ՁԻԱՆԱՆ

ՊԱՔՐԵՑԷ՛Ք անհետ կարմիր օձերին,
Թոյնով լի ու լի այդ միքրոպներին,
Զ՚թողնէք այնտեղ նոցանից ո՛չ մին
Ինչպէս որ նոքա մե՛ր հարանց արին։

Ա՛յլ ե՛րբէք նոքա չունին մեր սրտում
Գէթ նշուլ անգամ, սերտ համակրում,
Լիրբ ու ատելի, ցած հոգիները
Մաքրել հա՛յ հոգից այդ ցեցիկները . . . ։

Բնա՛ւ արժան չեն ապրել հա՛յ երկրում,
Իսկի տեղ չունին նրանք մե՛ր սրտում,
Սերունդ վիշապի նենդ սիրտ հրէշներ . . .
Ծրծեցին վերջին մե՛ր արեանց չիքեր։

Որքան էլ անցնին դարե՛ր անհամար,
Զայդ որդւոց որդի, երբեք չենք մոռնար,
Ամէն մի՛ հա՛յ սիրտ, վրէժով լեցուած,
Ոխն իրան ձեռով պի՛տ լուծէ վառուած։

Թէ կ՚ուզես հա՛յ ազգ, ծաղկեալ Հայաստան,
Վերստին լինի դրախտն բուրաստան . . .
Զանա՛ որ փրկես արմատը որդէն
Եթէ ո՛չ որդը կը կրծէ տակէն . . . ։

ԽՈՐ ԳՈՒԲԻ ՄԷՋ

Լուռ խոր գուբի մէջ շուրջս էր ամայի,
Իբրեւ անըզգայ մարմին մը առած,
Մըթին սաղմի մէջ, ես չէի գիտեր,
Այստեղ թէ այնտեղ . . . ո՞ւր էի եղած։

Երբ Աստուածութեան պարգեւն տուած,
Նուրբ հոգիս տուաւ, շնչիկներ սրտիս,
Իսկոյն կեանք առայ, խուփ աչերս բացի,
Այս ո՞ւր եմ ինկած . . . շուրջս գիտեցի։

Բանալով աչերս տեսայ խուռն ամբոխ,
Մարդիկներ անցնում, սրարշաւ լղրծուած,
Եւ ամէն մենը պոռչում էր, իմ նէ . . . ,
Տեսայ միայն, ես եղեմ, մնացած։

Եւ ես ալ փութով նրանց խառնուայ,
Իսկոյն տարուեցայ ամենքէն ատուած,
Ամ այս անիծուած ունայն աշխարհին,
Ցավշտակուեցայ կախարդիչ դէմքին։

Արդ ի՞նչին հաւատամ փուճ տիեզերքին,
Անձիս դէմ դաւեր, լարում մշտագին,
Հատ հատ օրիկներս խլում՝ ինձանից,
Իսկի չի հանեց բաժին ժպտանքից։

Եւ ահա՛ հիմի՛ արիւն եմ թքնում,
Կեանքիս օրերու ամեն վայրկեանում,
Վիշտը անպակաս սիրտս է կրծտում,
Առ միշտ յարաժամ հոգիս մորմոքում։

Արդէն օրհասն է ինչին էակիս,
Որը պիտ՝ իջնեմ մի՛ այլ գուբի մէջ,
Որա նախկինէն . . . ի՞նչը է տարբեր
Ո՞հ էութիւնս երաշ է եղեր . . .։

Ո՛Չ ՄԻ՛ ԱՆԳԱՄ

Զի՞ ՎՀԱՏԻՍ, ո՛վ դո՛ւ հա՛յ ազգ,
Քոնն է անշուշտ ապագան։ . .
Քոնն է, անխաբ այն պանծալի
Սուրբ երկիրը քաջ Հայկեան։

Քանի այսպէս մրրիկներ . . .
Եկան անցան քո՛ վրէն,
Կարմիր ծովի՛ մէջ, լոյ տալով
Ազատուեցար խեղդանքէն։

Մօտէ այն օր . . . կու գայ շուտով,
Նորա անհետ պիտ՝ կորչին,
Իսկ դո՛ւ գարնան . . . ջղերի տակ
Պիտ՝ յարաճիս մշտագին։

Դո՛ւ նման ես գարնան վարդի,
Կեանք ներշնչում, քո՛յ բոյրը,
Պիտ՝ նորոգես պիտ՝ զարդարես
Զորցած թփիդ ճիւղերը . . . :

Թէպէտ ա՜խ նենդ . . . դահիճներդ
Վարդիկներդ . . . քաղեցին,
Բայց դո՛ւ նորից, ծիլեր տալով
Կոկոն պիտ՝ տաս վերստին։

Եւ քո՛յ վսեմ արժանիքդ
Ցոյց պիտի տաս ազգերին
«Որ դո՛ւ երօք-արժանի ես
Ապրելու մէջն աշխարհին»։

Քանի՛ անգամ, քո՛ ճիւղերը
Ստէպ ստէպ, յորդեցին . . .
Իսկ դո՛ւ կրկին կեանք առնելով
Վէ՛ս պահեցիր քո՛ հոգին։

Եւ միշտ խրոխտ անընկճելի
Կուրծք՝ դէմ տուիր այրաբար,
Քո՛ բնածին գոյութիւնդ
Դո՛ւ պահեցիր ամրաբար։

Երբեք գոյնդ չայլայլեցիր . . .
Ո՛չ մի վայրկեան ո՛չ մի ժամ,
Դու մնացիր միշտ անփոփոխ
Որպէս սօսի անթառամ։

Պիտ՝ բազմանայ Հայկեան սերունդ
Ցոհմը զարմին Թորգոմեան,
Դարձեալ պիտի տերը լինիս
Հայրենիքիդ պապակա՜ն։



ՊԱՐՏՔԴ ԿԱՏԱՐԷ

Այս մեծ պատմական, օրեայ կարօտով
Սերունդներ չա՛ր շար, եկան ու անցան,
Քանի՛ միլիոննե՛ր իշխեր սրտերին . . .
Ա՜խեր քաշելով, ինչան լռանան։

Արդ փա՛ռք եղբարդդ ո՛րք ճակատում արդէն
Կանգնած նայում ես օ՞հ, դե՛ռ հեռուէն,
Միթէ՞ որ չը կայ՝ մէջ երակներիդ
Կաթիլ մը արիւն սէդ առիւծ ցեղիդ։

Երբե՛ք առանց քո՛ ազգի գոյութեան
Կեանք չունիս եղբա՛յր կեանքդ կորուստ նէ
Չի՛ մրես դէմքդ, եղբայր պատուական
Քո՛ կռուող ազգիդ, հասի՛ր օգնութեան։

Ահա՛ տես նոցա, հուր են կըտրած,
Վառառեալ սրտով, մղում են ճակատ,
Մի՛ ակնթարթում, տապլում են գետին,
Պատկած ծարաւով ըմպում արիւնին։

Շտապի՛ր և դո՛ւ սլայ կարմիր դաշտ . . .
Հանիր վրայէդ, ստրկի շապիկ,
Տաք տաք, գնդակներ տուր ճակտեաց փուին,
Մեկից կըտրրէ օձերի . . . ընչիկ։

Եւ անդ իրապէս, գործիր հրաշքներ,
Ցոյց տո՛ւր քո՛ բազկի հուժը գործնական,
«Օսմանի» դրած լուծը քո՛ վզեն
Վերցուր վրայէդ դիր նրա վզին . . . ։

Մինչ ե՞րբ քո՛ տանը իշխանը լինի,
Փա՛ռքդ վայելէ, արիւնդ ծրծի . . . ,
Միթէ որ մայրդ Մէհմէտի համար . . .
Տանջանքներ քաշեց քեզ բերեց աշխարհ։

ԲԱՂԱՅ ԱՍՊԱՐԷԶ

ՀԱՍԱ՛Ի այն . . . վսե՛մ ժամը պաշտելի . . .
Որուն սուրբ սիրոյն, մենք հոյլ դարերով
Տրոփեալ սրտով, էինք սպասում,
Ցառա՛ծ մե՛ր աչեր անհուն կարօտով . . :

Զօնե՛նք մե՛ր սրտեայ եռուող արիւններ,
Մե՛ղ ստեանց կաթով . . . սնուցող մայրին . . .
Որուն մենք պարտինք, մեր բոլոր կեանքով . . .
Նուիրաբերուինք, անձնուրաց ոգով:

Կասարե՛նք մե՛ր պարտք, որ է սրբազան,
Դա, օրէնք մըն է՝ իսկ որ բնական . . .
Քիչ մ՚ալ ճիգ ու ջանք, պիտ՚ ըլլանք ազատ . . .
Պի՛տ լինենք մեր տանց, տէրն հարազատ :

Առա՛ջ ընթանանք քա՛ջաց ասպարէզ
Կրկի՛ն և կրկի՛ն, խի՛տ խի՛տ շարքերով,
Մեր կուռ՝ ուժերնիս կրկնապատկելով
Առնե՛մք փրկութիւն վե՛հ յաղթանակով:

Հայքարդէն ժամն է . . . վրէժք առնելու,
Թշնամոյն արիւնք, կուռ կուշտ խմելու,
Վա՛յ այն Հային որ, ոխքն չէ՝ լուծում,
Իւր եղբարձ արիւնք թշնամեաց թողնում:

Վա՛յ այն Հային որ, ստրուկութիւնը
Իրան սրբազան պա՛տ է համարում՝
Մի՛շտ վարժ ու սովոր, ձեռք ոտք լիզելու
«Բորոտ շունի պէս պոչիկ է փարտում»:

Վա՛յ այն Հային որ, ոսող են սարսում,
Ինչ պէս որ մուկը կատուէն է փախչում,
Լեղուց նէ պատռում՝ ե՛րբ տեսնէ նրան
Այդպիսի անձն արժան չէ՝ ապրման . . . :

Ո՛վ որ ետ փախչի փոթորկի հովտից,
Ո՛վ որ նահանջէ մարտի ճակատից,
Ինչ է սպասում այդպիսի ցածից,
Բան մըն ալ աւելի նոյն իսկ. գաղանից . . . :

ԵԱՐՕՏ ՍԻՐՏՍ

ԵԱՐՕՏ սրտիս երկներուն
Դո՛ւ մի՛ դպչիր ո՛վ քնար,
Օ՜հ, մի զարթեր՝ իմ սև վշտեր,
Թո՛ղ քուն ըլլան, այդ դարդեր։

Այդ քնարովդ, իմ թոյլ կրծքին
Մի՛ նետիկներ արձակեր,
Առանց դա էլ, շատ ու շատ կան
Սրտիս վրայ բշտիկներ։

Թո՛ղ անդորը իմ, հոգեակ,
Մի՛ խոցեր տար կրկնակի . . .
Բո՛յ ո՞ր թելին ես դպչիմ որ
Սլաք սրտիս չարձակի։

Այդ ցաւ երգու լարիկներդ,
Երբ պի՛տ լռեն հնչելուց
Որ գէթ անդամ, սա սրտիկս
Ազատ լիներ հալւելուց։

Որ փիւրաւոր ծով վշտերից
Լուսնի նման ո՜հ, սառչեր,
Մի՛ որոներ էջերի մէջ
Կաթիլ արիւն չես գտներ։

Մի՛ մրրկեր իմ ներքնաշխարհ . . .
Ով քնար իմ հատորիկ,
Դաժան ձմեռ մոխիր արեց
Վարդ, մանիշակ շուշանիկ . . . ։

Այն օրուանից ո՜ սրտիկս,
Հալ ու մաշի ենթարկուեց,
Ինչպէս վառ վարդ թոռմաւ թոշմաւ
Արեւիկը խաւարեց։

Կար ժամանակ եռ ու զեռով
Վառ յոյսերով լիք լիքներ . . . ,
Իւր մէջ առած անհուն աշխարհ
Կարծես նրան նա կիշխեր։

Բայց թէ հիմի՛ հակապատկեր
Որ տեսնում եմ ախով լի
Ահա՛ արդէն վերածուեր է
Շտեմարան դարդերի . . . :

ՀԱ՛Յ ՄԵԾԱՏՈՒՆ

Մի՛ ըսել տար սիրտը քարէ,
Որքան կարիս բարիք արէ,
Եւ բերանդ լեղի մառներ
Անմահ հոգոյդ թոյն մի՛ խառներ։

ԱՐԵԱՆ ՀԵՂԵՂՆԵՐ

ԴԱՐՁԵԱԼ ծայրայե՛ղ տուժեց հա՛յ ազգը
Դարձեալ՝ սև ամպեր պատին իր շուրջը,
Ո՜հ, չուառ ցեղիս կրկին ըրին զոհ,
Այն . . . վօթած արնէն նենգեր . . . չեղան գոհ։

Հայի դիակով, լեցուեցան գետեր,
Առին ծոյն իրանց, բիւրաւոր կեանքեր . . .
Գեհոն, ու Փիսօն, Տիգրիս ու Եփրատ,
Փոխեցին իրանց նախկին ընթացքը։

Օ՜, արդէն Հայի օրն է սևագին . . .
Ժամ նէ ահռելի, կեանքն է դառնագին,
Տեսէք սրբավայր եղեմ պատմական,
Նորից . . . ըղտուէց, մէջ բոսոր արեան։

Ո՛չ այր մարդ թողին, և ո՛չ երախայ,
Ամէնքը սրի քաշին անխնայ . . . ,
Գեղանի հարսունք կոյս օրիորդներ
Տարին լեցուցին, բռնի հարէմներ։

Սուրբ տաճարների սրբազան հայրեր»
Քահանայ, դպիր, եւ ուսուցիչներ . . . ,
Ամէնքը բերին, լեցուցին մի տեղ,
Եւ ըրին Նոցա հրոյ ճարակներ։

Ի մէջ բերդերի բռնեցին սոված,
Թողուցին անջուր, վառուեցան պապկած,
Բիւրաւոր կեանքեր, փուուեցան յատակ
Ինկան անարիւն եղան նահատակ . . . ։

Բռնած էր զաշխարհ Նոցա հառաչներ,
Զայս տեսաւ անգութ պաշտուած Աստուած մեր
Որ միշտ սիրահար պապանձուած դերին,
Դերը կատարեց Զաքարիային . . . ։

«Թորգոմեան տունը» հիմքից աւերակ . . .
Սեռը հայկազեան արդէն նահատակ,
Հայի արիւնը դաշտեր Նայիդեան
Ծրծեցին կուռ կուշտ ուռճան ու փխրան։

Արցունք չի մնաց հայի աչերին,
Որ կաթիլ կաթիլ, բիբերից ծորուին,
Օ՜հ, նոյնիսկ անգամ չը թողին ոսոխք
Պտիկ մը արիւն մէջ երակներին։

Ուր է՞ր այն «Աստուած» ուր է՞ր չտեսա՞ւ
Հայի սև օրին օգնութեան չի հասաւ,
Արդ մենք ի՞նչ սէրով, և կամ ի՞նչ ոգով
Դե՛ռ պա՞շտենք, երգե՞նք, անունը սրտով։

Որ ահա՛ այն տեղ . . . քաջս նէ տիրեր,
Դիւղ, քաղաք, աւան, մոխրի վերածուեր,
Հայրենի սար, դաշտք, լռիկ սգում են
Զրկուած են Հայի զուրգուրանքներէն։

ՔԱՆԻ ՈՐ ՉԿԱՅ

Քանի որ չկայ ե՛ըբէք իսկութիւն,
Քանի որ չկայ, ճիշտ ճշմարտութիւն,
Ի՞նչ պէտք է աշխարհ, թո՛ղ նա ալ, չըլլայ
Թո՛ղ աշխարհն հիմքից, տակ վրայ ըլլայ։

Քանի՛ որ չկայ սիրտ անկեղծ քաղցուն,
Քանի՛ որ չկայ սէր եղբայրութիւն,
Ամօթ, աշխարհին, որ տեղն է կեցեր,
Անդունդէ անդունդ, թո՛ղ ի վար իջնէր,

Քանի՛ որ մարդ ծնած, դաղան բնազդմամբ,
Լեցըրեր զաշխարհ անիրաւութեամբ . . . ,
Քանի՛ որ այսպէս . . . ա՜խի օթեւան,
Ըրեր աշխարհը քարբաց որջարան . . . ։

Արև, և լուսին, աստղերք, խաւարին,
Զըլլայ չնչաւոր ի մէջ աշխարհին,
Լինի ամայի, որ էր սկիզբէն,
Դարձեալ վերածուի նոյն կերպարանքին,

Աւաղ բնակերտ, չքնաղ տիեզերք,
Զունեցաւ տէր մը ճշմարտին փարուած,
Ո՛չ անկեղծ «Աստուած ո՛չ ալ Քրիստոս»,
Բոլորը իսկ որ զաղիր արարած . . . ։

Թէ կայ Աստուած մը թո՛ղ նա էլ ջնջուի,
Թէ, իրօք կանը . . . թո՛ղ անհետ կորչի,
Արդարութիւն մը միթէ որ պէտք չէր,
Որ նա այդ բնաւ իսկի չէ ստեղծեր։

ԵՐԲԷՔ

ԵՐԲԷՔ չէ՛ յուսաք, աշխարհին վատթար
Թէ օրեր կը պակսին անցաւ անարցունք,
Այս է բնական օրէնք բնութեան,
Քանի մարդ մէջն է կեանքի գոյութեան։

Խողել խոշտանգել եղբայր իր եղբօր,
Նեռվրտիլ վէտ վէտ, տիակի բոլոր,
Ահա՛ մարդկային ծնունդն ի բնէն,
Որն է մնացած ժառանգ «Կայենէն»։

Թէ և ըսած է մեր «մեծ պատգամը»
«Որ կու գայ մի օր ցանկալի բարին»
«Որի նմանը իսկի չէ տեսած
Մարդիկ համերաշխ սիրով պիտ՝ ապրին»։

«Նման զնմին ընկեր սրտագին»
«Այնպէս պիտ՝ ցանկայ ինչպէս իւր անձին»
«Ողբ, ու վիշտ, մորմոք, այլ և անծանօթ»
«Պիտ՝ ծփայ ժպտանք մարդկանց դէմքերին»։

«Մի՛ հօտ մի՛ հովիւ ի մէջ աշխարհին»
Գայլն, ու գառն, մի տեղ պիտ՝ արծին»
Օ՜ այդ ալ... առ ժամեայ երազի նման,
Մի բան պիտ՝ լինի մարդկային ցեղին։

Դարձեա՛լ մին մինի՛ մարմինը կրծող...
Դարձեալ, իրարու արիւնը ծըծող,
Փոխնէ փոխ տիրող, փոխնէ փոխ գերի,
Պիտ՝ տանին լուռ մունջ մինչ իրենց հերթին...։

Պիտ՝ շարունակվի ընթացքը նախկին...
Պիտ՝ բացվի նորից կարմիր ասպարէզ,
Սրեր մերկացուած պիտ՝ խրին կրծքեր,
Մարդկանց դիակներ պիտ՝ կոյտվին դէզ դէզ։

Վերստին աւեր, վերստին մոխիր,
Կերտուած գեղարուեստ գետնահար կրկին,
Այսպէս անընդհատ անծայր և անվերջ,
Քանի «Մարդ... մէջ նէ երկրագնդին»։

«Միշտ բարի հոգիք թո՛ղ այնպէս յուսան
Անքուն անդադար քարոզներ տեղան»
«Ազգեր իրար հետ պի՛տ եղբայրակցին
Թէ կ՚ըլլայ աշխարհը մարդկանց հանգրաւան»։

ՀԱՅԵՐ

Դարերով դիզուած բարդ բարդ այն վէրքեր
Նորի՛ց յարութիւն չառնեն հա՛յ սրտում . . .,
Նորի՛ց ալեկոծ, նորի՛ց փոթորկում . . .
Զըլլայ բուք բորան հինի նորոգում։

ՔՈՅՐԻԿ

ՔԱԼՈՒԽԴ բաց, ոտդ բոպիկ
Աքսորական հէ՛գ քոյրիկ,
Երեկ էիր պերճ կեանքի մէջ,
Այսօր չունիս չոր հացիկ։

Դէմքդ տխուր, սրտիկդ հուր,
Դո՛ւ ընկել ես սար ու ձոր,
Վիշտդ ծով է՝ . . . չկայ դարման,
Անմխիթար անկումն։

Որ դո՛ւ արդէն թափառում ես
Անտուն անքուն թռչնի պէս,
Չ՚կայ մի ոք . . . որ սրտովին
Նայէ խպնած քո՛յ երես։

Ա՜խ, ո՞վ չարե՛ց քաշուեր այն . . . ձեռք
Սև տառերը քո՛ ճակտին,
Որ քեզ ձգեց զարհուրելի
Այդ ահարկու վիճակին . . . :

Ուր անդ քշած Միջագետքի
Մահակրիչ դաշտերում,
Անլուր, անտես, անասելի . . .
Տանջանքներով տապկում՝:

Որպէս ցեղն հրէական
Բաբելոնի դաշտերէն,
Ա՜խ ես քաշում՝ ի խոր սրտից
Սուրբ հայրենեացդ կարօտէն:

Եւ անդադար զոյգ բիբերէդ
Ծորում՝ արեան կայլակներ,
Որք կազմում՝ են այդ չիթերից
Բոսորագոյն գետակներ.

Վերջ մը տային . . . տառապանքիդ
Վերնար ընդ միշտ սուգ աւեր . . .
«Լինէր այս քո՛յ վերջին բաժակ . . .
Անցնէր քեզնից սև . . . օրեր» :

Գլուխդ բաց ոտքդ բոպիկ
Ո՛վ ապաբախտ իմ քոյրիկ,
Երէկ էիր ճոխ կեանքի մէջ
Այսօր չունիս չոր հացիկ:

ՅՈՅՍ ԵՒ ԿԱՐԾԻՔ

Անծայրածիր անհունի մէջ
Մարդի՛կ ի՞նչ են փնտրռում՝
Եթերային կապոյտ դաշտում
Վե՞ր նասիօն են երազում . . . :

Որ դէպ այն տեղ . . . սլանալու
Տենչանքներու բռնուած,
Օդով կառուած արքայութեան
Մէջը յաւէտ ցնծալու:

Միշտ անթառամ՝ վարդ գարունները
Գեղադալար տեսնելու,
Հրեշտակաց հետ միաբար
Դէպ առ Աստուած երգելու:

Դարեր անցան անթիւ դարեր,
Ո՛չ մին գտաւ զայն տեսներ
Դա մարդկային, սոսկ յորջորջն է
Որ խաբումէ ինքնիրեն:

Ահա՛ այս է, մեզ կենսաբաշխ
Աշխարհ միայն իրական,
Ի զուր ինկած . . . որոնում ենք
Մի այլ աշխարհ հոգեկան:

Անուրջէ այն երկնաշխարհը
Եւ անուրջալ կը մնայ . . .
Բաց օդային լերկ յոյսերու
Մի՞թէ պէտք կայ տարուելու . . . :

Սա դարերու առասպել է . . .
Կարծիք, լոկ յոյս, մարդկային,
«Որ ինձ համար ցնորանք է
Հիմքից զուրկ է գլխովին»:

Միայն այս է իմ հաւատամք
Որ պի՛տ իջնեմ լռարան,
Անել փոսի, մէջը հանգիստ
Պիտի ննջեմ յաւիտեան:

ՄԱՐԴԸ Ի՞ՆՉ Է

Մարդը սա բնաշխարհի մէջ, խորհրդաւոր ա-
ռեղծուածային հանելուկ մըն է, իսկ նրա իրա-
կանութեան՝ դումարումը ամբողջապէս զերо:

Ա՛ՍՏՈՒԱ՛Ծ ԵՒ ՆՈ՛Յ

Անծի՛ր եթերից, քաշուեցան մէգ միժ
Տուեց լազուրթը դէմքը կապոյտին,
Երեւում աստղե՛րք, մով ե՛րկնի կրծքում
Որոնք բարձրից խիստ պայծառ փայլփում։

Աստղերք անհամար անհունի գրկում,
Կարծես լողում են կապոյտակ ծովում,
Որոնց մէջ մին կայ, եզակի տեսքով,
Որ իւր ճաճանչով, ապշանքէ առթում։

Փառք նորա ցոլքին պատի՛ւ հա՛յ ազգին,
Որը բարձունքի վերին սրահէն,
Շողն արձակելով հայոց աշխարհին (երկրին)
Հսկում ակնդէտ հայկայ սերնդին։

Որ (սա) լուսաթոյր աստղը հիահրաշ,
Զրհեղից յետոյ առեց իւր ծագում . . .
Անչէջ վառվռում վերև լազուրում,
«Փարոս եղեմի հայի եթերում»։

Եւ երբ (տապանը) նստեց կատարին,
Երբ «ինչաւ Նոյը ոսք դրեց գետին»,
Նա ծունը գալով աղօթեց մեծին . . . ,
Հողն համբոյրելով քսեց երեսին։

Ու արեց տիրոջ իւր խոնարհ դիմում,
Անբիծ սրբազան «Մասիսի» գագաթում,
Ո՛վ տէ՛ր չի կրկնէք մարդկութեան ջնջում,
Կամեցէք ապրի, աճի աշխարում։

Որը լսելի եղաւ լիովին,
Աստուա՛ծ ընդունեց խնդրուածք Նոյին,
Եւ ծիածանը պարզեց երկնքում
Նշան սերտ կապի մարդկային ցեղին։

Եւ հենց այն օրը դաշն կնքեցին,
Երկնապատդամի ալեզարդ գլխին,
Այդ խորհրդաւոր . . . հաշտավայր տեղում
Սա էլ մտցրեց . . . պայմանագրում։

Տէ՛ր իմ կամե՛ցեք յաբեթի զարմին (տոհմին)
Ձեր անխչելի սէրը սրտադին . . . ,
Մե՛ծ Նահապետին «արեց շնորհում»
«Հայկ անուն աստղ մը փայլեց երկնքում»։

Որ այն տեղ . . . դարե՛ր, դարեր անհամար
(Նոյը) խնդրուեր հա՛յ ազգի համար,
Մինչորդ Աստուծոյ դեսպան երկնքի,
Առ միշտ կանգնած է, առջև գահոյքի։

ՅԱՆԿԱՐԾ

Յանկարծ փոթորի՛կ բարձրացաւ սաստիկ . . .
Ջարդ փշուր արեց, վանդակի դռնիկ,
Դարերով փակուած էակը լռուն.
Թռաւ վանդակից սոխակը խօսուն . . . ։

Ճեղքելով օդը սլացաւ դէպ վեր,
Փափաքն առնելու արեւի լոյսէն,
Տեսաւ բաղձալի արփիի ծագում,
Որուն խիստ արդէն, կարօտն էր քաշում։

Եւ առաւ անցեալ այն փա՛ռքը նորից
Որ նա վաղուց էր փախչեր ձեռից . . . ,
Արդ շնչում արձակ, հայրենի տնում
Երգում է աղատ այլ չէ վանդակում . . . ։

Բացուէր մանիշակ, նունուֆար, շուշան,
Այն սուրբ երկրում, որէ հայութեան
Փայլփում են իրանց գեղալիր տեսքով,
Մէջ բուրաստանի պերճ զարդանքներով։

Կանաչեր ծառ ճիւղք, չորիկ թփիկներ . . .
Հրապուրում են պէս պէս թռչնեակներ
«Իսկ սոխակն արդէն վարդի ոստիկին
Իջեր երգումէ անհուն հրճուագին»։

Որ այս գարունին . . . վաղուց էր կարօտ,
Շատ գարուն անցուց սրտիկը եարոտ . . .
Փա՜ռք, ձմեռն անցաւ հայոցս աշխարհէն,
Սոխակի սրտիկն այլ, բուժուաւ վերքէն։

Որ քանի դարեր շարունակ անբուժ
Պատեր էր սիրտը բիւրաւոր վէրքեր . . . ։
Զկար սպեղան, չկար դեղ դարման
Կրծտում են կարմիր բացիլներ . . . ։

ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐԸ

Ես ԶԻՆԻՈՐ եմ իմ հայրենեաց,
Հրացան ձեռիս պինդ բռնած,
Հայրենիքս պաշտպանելու
Միշտ պիտ՝ կռւիմ կուրծք տուած։

Թոյլ պիտ՝ չտամ որ թշնամին
Հայրենիքս ոտք դընէ,
Ազգիս պատւին տիրանալով
Կամքին գործիք դարձընէ . . .

Եւ պիտ՝ կանգնիմ միշտ անվեհեր
Ոսոխներուս դէմ առ դէմ,
Որպէս առիւծ բաշս պարզած
Ռազմի դաշտը պիտ՝ նետւիմ։

Դնդակներիս տարափին տակ
Մինչ չզգեռնեմ թշնամին,
Ետ չեմ դառնար մինչև չառնեմ
Ցաղթանակիս դրոշը։

Ես ազգինն եմ ազգը իմն է
Նրա սիրոյն կը կռւեմ,
Իմ պաշտելի հայրենիքս
Ո՛չ, թշնամուն յանձնող չեմ։

Այս է իմին անխախտ ուխտը,
Քանի ունիմ շունչ ու կեանք.
Ինձ կեանք տուող հայրենեացս,
Միշտ պիտ՝ բերեմ փառք պարծանք։

ՀԱՅ ԱԶԳ

Թէեւ օտարք քեզ սիրում են,
Բայց դու երբէք մի հաւատար,
Որովհետև այդ շոյանքն է,
Կեղծ ու պատիր, անկատար։

Նոքա միշտ էլ սերտ, սրտաբար,
Շռայլում են ժպիտներ,
Եւ ճակտիցդ հա՛ քաղելու,
Կեղծիքով լի՛ համբոյներ։

Մինչեւ իրանց նենգ ժային,
Ձիք խորհուրդքն աւարտած
Ձիդ են թափում, հուսկ տեսնելու,
Սև իղձերքն կատարուած։

Բայց դու, հայ ազգ, արթուն կացիր,
Չէ մրափի ժամանակ . . . ,
Նաւիդ ղեկը դու հմտաբար,
Բռնիր ձեռքումդ ամրաբար։

Զգոյշ եղիր, կուլ չգնաս,
Փրփրագոռ ալեաց մէջ,
Յանկարծ չը տաս քո դարեւոր,
Վէ՛հ գոյութեանդ խսպառ վերջ։

Սէ՛ր միութեան զէնքը ձեռիդ,
Ամուր բռնիր սրտովին,
Թէ դու, կ՚ուզես որ չի մնայ,
Լոկ քո՛ անուն աշխարհին։

Ժամանակը խիստ նրբին է
Ո՛վ խղճուկ ազգ նահատակ,
Դու չկարծես որ քեզի հետ
Կանեմ երբէ՛ք խեղկատակ։

Այս է պահանջ ժամանակի,
Ճակտիկ ընդ դէմ, ոսոխին,
Կարմիր ահեղ ռազմի հովտում
Լինել տէրը քո՛յ անձին։

Արդէն մօտ է ահեղնագոչ
Մարտի շեփորք պի՛տ հնչեն,
Զգաստ կեցիր ըստրկութեան
Մուրը սրբես քո ճակտէն։

1906 Թ. Յունիս 8ին

* * *

Եթերի գրկում՝ աստղերքն ցանցիր
Տխրամած դէմքով, դէպ վար են նայում,
Միթէ Հայի պէս դժկոտ օրերի . . .
Նոքա էլ ինկած անմռունչ տանում։

ԾԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

ԴԱՐՁԵԱԼ մրթագնեց երկինքը Հայուն,
Դարձեալ աւերմունք, գօս Հայրենիքը,
Դոռ որոտ կայծակ շանթ ու շառաչում,
Երկին արեան ծով, հեկ ու հառաչում։

Ահա լսում է, հեծ ու հեծկլտանք,
Բիւրբիւր բերանից աղի հառաչանք,
Թանձր ահարկու խաւարն է տիրեր,
Մռայլն է պատեր մորմոքող սրտեր։

Այրեցեալ կանայք, հարս աղջիկք կուսանք,
Բռնաբարումի եղած են բաժին...,
Պէս պէս նախճիրներ գործող վայրենի,
Դարեւոր (սա) չիք դաւաճան ցեղին։

Միշտ զարհուրելի կարմիր տեսարան
Ընկած է վիճակ խղճուկ հայութեան,
Երում ահռելի ձիգ երկար դարեր՝
Անվերջ անդադար ներոնեան ջարդեր։

Երախայք հանում ի փորոց մարցըն,
Թրատում մորթում, անմեղ էակներ,
Եւ անասելի նոցա եղեռնանք ...
Տեսնող մարդկութեան բերում ցնորանք։

Արեան դաշտի մէջ ցնցող հոգիներ,
Տե՛սէք անկենդան, Մերազնեայք փռուեր,
Շպրտուած դէս դէն, ջլատուած դիեր,
Որպէս աշնային թափուած տերեւներ։

Մորթեր դէմքերի, քերծուած քերդուած,
Փշրուած գանկեր, ուղեղներ թափուած,
Մին մինի կողքին, բարդի բարդ ընկեր,
Դաշտք, հովիտք, բլուրք, ձորեր են լեցուեր։

Մանուկներ մատաղ ընկած մայրերու
Արիւններ հոսող կրծքերու վրայ
Օդն է ցնդում նրանց ճչ-ճչանք,
Ինկած լքման մէջ, չունին տէր տիրանք։

Մշուշ է պատեր, երկինքը Հային,
Մրրիկն է փչում... Թորգոմայ տանը,
Կրծքերից վաղած, արեան գետակներ,
Արդէն տեսնում է՝ համայն տիեզեր։

1908 Թ. Հոկտեմբեր 26ին Վայրա

ՀԱՅ ՀԱՐՈՒՍՏԸ

Աղ՝ Դուռ, հայ հարուստ սառցապատ սրտով
Դէն կանգնած միայն նայում ես նայում,
Դա չ՝է պատիւ քեզ և ո՛չ քո տոհմին,
Բա՜ւ է խնկարկես այդ մամոնային։

Եւ դեռ պաշտում ես այդ դեղին պարկին
Մի՞թէ չե՞ս տեսնում ան արեան վտակ.
Քո ազգի եղբարց կրծքերէն վազում,
Թշնամեաց սրով հոգիք աւանդում։

Այդ կարմիր հեղեղք չեն օտարների
Այլ քո՛ հարազատ հէգ եղբայրների,
Մի լինիր, Համիտ, Կայէն, և Եվդոկ,
Փութա՛ կատարել քո պարտքը խղճիդ։

Մրմունջը սրտին յառած դէպի քեզ,
Ահա՛ աղերսում մի՛ փշուր հացիկ
Բայց դո՛ւ քարասիրտ անգութ անհոգի
Մերժում ստանում քեզ պարզուած ձեռիկ։

Արդէն տեսնում ես վիճակը ազգիդ
Թէ չ՝ուզես փրկել մահառիդ սովից,
Տա՞յ դովեստ ազգը՝ ասա՛, քո ինչի՞դ...
Սրբիր անունդ հայի մատեանից...։

Մի՛ խ դու, հա՛յ «Ցազկերտ» ձիդ գոցիր աչերդ
Գոցի՞ր այդ լսող ականջի ակերդ
Մի՛ գուցե չարժի խիղճդ քեզ տանջէ
Պակսին գրպանէդ պաշտած չաստուածներդ։

ԴԷՊԻ ԱՅՆ ՏԵՂ

ՀՐԱՇԱԿԵՐՏ մայր եդեմի
Բացուեր դռներ Գարնաւէտ,
Ոստից վր'ի բացուած վարդեր
Կը հրաւիրեն Սոխակներ...,

Հրաւիրուած այլ թռչնակներ,
Եւ «ծիծեռնակն պատմալիր»
Արդ (նա) սիրոյ խանդով լեցուած,
Թռչում է անդ ցնծալիր։

Գնում կրկին վերշինելու
Իր հայրենի խրճիթիկ.
Որ փոթորիկն սաստիկ ձմրան
Ցրիւ էր տուած իր տեղիկ։

Եւ սրտովին պինդ կառչելու
Բընիկ տընին իր աւեր։
Սուրբ հարազատ հողին քարին
Տալ սիրաչերմ համբոյրներ։

Ահա՛ ծագեց Գարնան արև
Ալ չ'է մնում ծիծեռնին,
Թեւատարած սաւառնանքով
Դիմում գիրկն իւր Մայրին։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Արա ССР
Ա. Մ. Ա. Мясникян
ՍԵՄԻՆԱՐԻՈՅՆԻ ՄԵՎԵՎ

ՎՐԻՊԱԿ

Երես	Տող	Սխալ	Ուղիղ
36	4	լռանան	լռարան
39	3	ուժերնիս	ուժերը
39	6	թշնամոյն	թշնամեաց
39	8	եղբարծ	եղբարց
58	5	անխչելի	անխզելի
40	1	եիկներուն	երակներուն
41	20	կտրծես	կարծես
48	12	մարդիե	մարդիկ
60	16	կրծտում են	կրծտում էին

4/ρ
Ա.Փ

ԳԻՆ 20 ԿՐՇ.

1906Ž
2013